Լրագրող Տիրայր Մուրադյանին

Թիվ 59151021 քրեական վարույթով տուժող
«Մեգիէլ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Ա. Սարգսյանից

«Մեգիէլ» ՍՊ ընկերությունը 13 հունվարի 2021 թվականին «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից գնումների ընթացակարգերով խախտումներ թույլ տալու, մասնակցի մրցակցությունը խոչընդոտող փաստերի հիմքով առերեւույթ հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին եւ հարուցվել է քրեական գործ։

Հարուցված քրեական գործն իսկզբանե ուղարկվել էր ՀՀ ՔԿ Երեւան քաղաքի քննչական վարչություն, սակայն որոշ ժամանակ անց ուղարկվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին առանց պատճառաբանության։ Գործին տրվել է 59151021 համարը։

ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 59151021 քրեական վարույթով «Մեգիէլ» ՍՊ ընկերության ներկայացրած որեւէ միջնորդություն, դիմում, հարցում կամ ցանկացած բովանդակության գրություն չի քննարկվել եւ պատասխան չի տրվել։

«Մեգիէլ» ՍՊԸ-ն միջնորդություն էր ներկայցրել ընկերությանը տուժող ճանաչելու մասին, սակայն այն եւս չէր քննարկվել տեւական ժամանակ, խախտելով օրենքով սահմանված ժամկետը։ Բողոքների արդյունքում է «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը քրեական վարույթով ճանաչվել տուժող։

Քրեական վարույթով հանցավոր արարքի հատկանիշներ պարունակող փաստերը եւ գրավոր ապացույցները բազմաթիվ են, սակայն դեռեւս որեւէ մեկին մեղադրանք չի առաջադրվել։

Քրեական գործի հարուցման օրից մինչ այժմ տուժողի ներկայացրած որեւէ միջնորդություն վարույթ իրականացնող մարմինը չի քննարկել եւ որոշում չի կայացրել (բացառությամբ մեկի), մինչդեռ՝ պարտավոր է քննարկել եւ կայացնել որոշում միջնորդության բավարարման կամ մերժման մասին։

Ցանկացած բովանդակությամբ ներկայացված դիմումների եւ գրությունների վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը ոչ մի պատասխան չի տվել, բացառիկ դեպքերում հայտնել է, որ դրանք կցվել են քրեական վարույթին։

Թիվ 59151021 քրեական վարույթով ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված բոլոր դիմում-բողոքները վերահասցեագրվել են Երեւան քաղաքի դատախազություն, իսկ Երեւան քաղաքի դատախազությունը՝ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն, վերջինս էլ՝ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնին, որից հետո հաջորդել է քննիչի բազմաբովանդակ գրությունն այն մասին, որ դիմումը կամ բողոքը կամ միջնորդությունը կցվել է քրեական վարույթին։

Ողջամտորեն հարց է առաջանում, ո՞րն է քրեական վարույթով դատախազության գործառույթը, վարույթի մասնակցի դիմումները վերահասցեագրե՞լ, թե՝ այլ գործառույթ էլ ունի։

Սույն քրեական վարույթով հսկողություն իրականացնող Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ, իսկ վերջին մեկ-երկու ամսում արդեն նույն վարչական շրջանի ավագ դատախազ Կ. Սուքիասյանը ներկայացված դիմումների վերաբերյալ հայտնում է, որ քրեական վարույթով կատարվում է համակողմանի եւ անաչառ քննություն։

Կ. Սուքիասյանին հարցադրում էր ներկայացվել, եթե իրականացվում է անաչառ եւ համակողմանի քննություն, ապա ինչով է պայմանավորված տուժող կողմի դիմումներին որեւէ պատասխան չտրամադրելը, եթե անաչառ եւ համակողմանի նախաքննություն իրականացվեր, ապա տուժող կողմը չէր ներկայացնի բազմաթիվ դիմումներ, բողոքներ, գործի համակողմանի քննության նպատակով միջնորդություններ որոնք չեն քննարկվել առհասարակ։

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությանը որպեսզի այլեւս դիմումներ չներկայացվեն, Կ. Սուքիասյանը 14.07.2023թ թիվ 55/695դ-23 գրությամբ տուժողի լիազոր ներկայացուցչին հորդորել է, որ այլեւս դիմումներ չներկայացվի, քանի որ վարույթ իրականացնող մարմնի կողմից իրականացվում է անաչառ եւ համակողմանի քննություն եւ առհասարակ հարկ չի համարում որեւէ բան հայտնել եւ պատասխան տրամադրել քրեական վարույթի վերաբերյալ։

Թիվ 59151021 քրեական վարույթով առկա է գրավոր ապացույց՝ արձանագրված ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից իրավախախտման ադյունքում պետական բյուջե մուտք չի եղել, վնաս է պատճառվել 30.385.500 (երեսուն միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ։

Պետությանը 30.385.500 ՀՀ դրամի չափով պատճառված վնասի դրվագի վերաբերյալ դատախազ Կ. Սուքիասյանին հարցադրում էր ներկայացվել, թե արդյոք Հայաստանի Հանրապետությունը կամ Երեւան համայնքը սույն քրեական վարույթով տուժող ճանաչվել է թե՝ ոչ, հայտնել է, որ «Հայաստանի Հանրապետությունը կամ Երեւան համայնքը սույն քրեական վարույթով տուժող չի ճանաչվել եւ տուժող ճանաչելու հանձնարարություն էլ քննիչին չի տրվել։»

Փաստացի պետությանը պատճառված վնասի վերաբերյալ պետական շահի պաշտպանությամբ դատախազությունը պետք է միջոցներ ձեռնարկեր, սակայն դատախազությունը կասկածելի է համարում ՀՀ ՊՎԾ-ի ուսումնասիրության արդյունքում արձանագրած իրավախախտումը, թեեւ Երեւանի քաղաքապետարանը գրությամբ եւս հաստատել է, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23 ընթացակարգով «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից թույլ տրված իրավախախտման արդյունքում 30.385.500 ՀՀ դրամ մուտք չի եղել պետական բյուջե։

Թիվ 59151021 քրեական վարույթով առկա են բազմաթիվ փաստական հանգամանքներ ոչ օրինական գործունեության վերաբերյալ, դրանցից եւս մեկը.

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/81 ընթացակարգի 2-րդ չափաբաժնով հաղթող ճանաչված մասնակցի հետ բժշկական կենտորոնը կնքել է ապրանքի մատակարարման պայմանագիր եւ մասնակիցը մատակարարել է կնքված պայմանագրին եւ ապրանքի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, որը ընդունել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն։

Սույն փաստի վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը մինչ այժմ իրավական գնահատական չի տվել։

Նշված ընթացակարգով տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքի մատակարարման եւ ընդունման փաստը հաստատվել է Երեւանի քաղաքապետարանի կողմից գրավոր (ապացույցը գտնվում է քրեական վարույթում)։

Ի դեպ բժշկական կենտրոնը ոչ միայն իրավունք չուներ ընդունելու տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, այլ նաեւ պետք է նախաձեռնվեր տվյալ մատակարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ եւ մի քանի միլիոն դրամ տուժանք բռնագանձվեր ՀՀ պետական բյուջե։

Բազմաթիվ գրություններին չպատասխանելու գործելակերպը դատախազությունը փոխեց, փոխարենը՝ հայտնելով, որ որոշակի հանգամանքներ պարզելու կապակցությամբ հանձնարարություններ են տրվել քննիչին։

Դատախազությունը մինչ 2023թ հուլիս ամիսը ներառյալ հայտնել է, որ «30.385.500 ՀՀ դրամի առնչությամբ ՊՎԾ-ի արձանագրած խախտումների վերաբերյալ որոշակի հանգամանքներ պարզելու կապակցությամբ վարույթ իրականացնող քննիչին տրվել են հանձնարարություններ»,

Սույն քրեական վարույթով 2022թ հոկտեմբեր ամսից մինչ 2023թ հուլիս ամիսը երկու քննիչ է ազատվել պաշտոնից, նրանց նկատմամբ կիրառվել են «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ։

Սույն քրեական վարույթով 11 ամսվա ընթացքում երկու քննիչ ենթարկվում է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժի, մինչդեռ դատախազ Կ. Սուքիասյանը հայտնում է, որ քրեական վարույթով կատարվում է «համակողմանի եւ անաչառ» նախաքննություն։

Հարց է առաջանում, եթե համակողմանի եւ անաչառ նախաքննություն է իրականացվել վարույթ իրականացվող մարմնի կողմից, ապա ինչու է կարգապահական տույժ կիրառվել քննիչ Ա. Մարգարյանի նկատմամբ, ում քրեական վարույթը մակագրված է եղել 2022թ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից։ Ստացվում է, որ դատախազական հանձնարարությունները կատարելու համար են քննիչներ Ք. Ներսիսյանը եւ Ա. Մարգարյանն ազատվել պաշտոնից։

Քննիչ Ա. Մարգարյանի կողմից դրսեւորած անգործության վերաբերյալ դիմումը ներկայացվել է տուժողի կողմից, որի քննարկման արդյունքում ենթարկվել է կարգապահական տույժի, ըստ էության դատախազությունը չէր կարող տեղեկացված չլիներ վարույթով դրսեւորած անգործության մասին։

Զավեշտ է, որ սույն գործով անաչառ եւ համակողմանի քննություն իրականացնելու համար 11 ամսվա ընթացքում երկու քննիչ է ազատվում պաշտոնից։

Երեւանի քաղաքապետարանը հանդիսանալով հիշյալ բժշկական կենտրոնի ընդհանուր կառավարումն իրականացնող՝ քննարկման առարկա չի դարձրել «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած այն իրավախախտումները որոնք թույլ են տրվել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից գնումների ընթացակարգերով, փոխարենը պատասխանել է, որ ներկայացված խնդիրները գտնվում են համապատասխան ստորաբաժանուների ուշադրության կենտրոնում։

Փաստորեն Երեւանի քաղաքապետարանը տեղեկացված լինելով նշված բժշկական կենտրոնի կողմից թույլ տրվող իրավախախտումների մասին ոչինչ չի ձեռնարկել դրանց կանխարգելման ուղղությամբ եւ իրավախատումներ թույլ տրված անձինք մինչ այժմ շարունակում են պաշտոնավարել նշված բժշկական կենտրոնում։

Օբյեկտիվ իրականությունը թույլ է տալիս հետեւություն անել, որ բժշկական կենտրոնը դրսեւորել է անգործություն եւ որեւէ իրավախախտման համար որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել, աշխատանքից չի ազատվել։

Ներկայացուցիչ՝

Ա. Սարգսյան

13 սեպտեմբերի, 2023թ